

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ 9-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՆԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՆԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2009թ.

Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդված 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայաստանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի 9-ին Մոսկվայում ստորագրված՝ Եվրասիական Կրեմլիական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայաստանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանին ուղղված Նանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 02.09.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ֆինանսների նախարարի

տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը եւ վերջինիս անբաժանելի մասը կազմող Կանոնադրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Խնդրո առարկա պայմանագիրն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 9-ին՝ Մոսկվայում: Պայմանագիրն ստորագրվել է Բելառուսի Նանրապետության, Ղազախստանի Նանրապետության, Արդգստանի Նանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Նանրապետության եւ Նայասրանի Նանրապետության կողմից:

Պայմանագիրը բաղկացած է 8 հոդվածից եւ կից Կանոնադրությունից, որը պայմանագրի հավելվածն է:

2. Պայմանագրին համապատասխան հիմնադիր պետությունները ստեղծելու են Եվրասիական Կոնսուլտացիոն համագործակցության հակաճգնաժամային հիմնադրամ՝ ազգային Կոնսուլտացիոնների կողմից համաշխարհային ֆինանսական եւ Կոնսուլտացիոն ճգնաժամի բացասական հետեւանքները հաղթահարելու, դրանց Կոնսուլտացիոն եւ ֆինանսական կայունությունն ապահովելու, ինչպես նաեւ հիմնադրամի մասնակից պետությունների Կոնսուլտացիոնների ինտեգրման հետագա խորացմանն աջակցելու նպատակով:

Նամաձայն պայմանագրի 2-րդ հոդվածի՝ հիմնադրամի միջոցները, մասնավորապես, օգտագործվելու են հետեւյալ նպատակների համար՝

- հիմնադրամի մասնակից պետություններին անկախ փոխառություններ փրամադրելու ,
- եկամտային ցածր մակարդակով կայունացման վարկեր փրամադրելու ,
- միջազգային ներդրումային նախագծեր ֆինանսավորելու:

Նիմնադրամի միջոցները փրամադրվում են վճարման, ժամկետային սահմանափակման եւ վերադարձման պայմաններով:

3. Պայմանագրով Նայասրանի Նանրապետությունը կրում է ֆինանսական պարտավորություններ:

Ըստ պայմանագրի 3-րդ հոդվածի՝ Նայասրանի Նանրապետության կողմից կատարվող նախնական հարկացումը կազմելու է 1 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Նիմնադիր պետությունների կողմից նախնական վճարումները կատարվելու են

հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 6 /վեց/ ամսվա ընթացքում:

Ընդ որում, վերոնշյալ գումարի 10%-ը հիմնադիր պետություններից յուրաքանչյուրը վճարում է ԱՄՆ դոլարով եւ /կամ եվրոյով, մնացած 90%-ը վճարվելու է պարզ, չըջանառվող եւ անտոկոս պարպամուրհակի թողարկման միջոցով, որի մարումն իրականացվում է հիմնադրամի մասին Կանոնադրությամբ սահմանված կարգին համապատասխան:

Տիմնադրամի հիմնադիր պետությունները դառնում են դրա մասնակիցներ նախնական վճարման պարավորությունները կատարելուց հետո, ներառյալ դրամական միջոցների վճարումը եւ պարպամուրհակների հանձնումը:

Պայմանագիրը բաց է ցանկացած շահագրգիռ պետության կամ կազմակերպության մասնակցության համար:

Տամաձայն պայմանագրի 4-րդ հոդվածի՝ հիմնադրամի միջոցների կառավարումն իրականացվելու է հիմնադրամի խորհրդի կողմից, որի անդամներն են հիմնադրամի մասնակից պետությունների ֆինանսների նախարարները եւ հիմնադրամի մասնակից միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, հիմնադրամի միջոցների կառավարչի հետ համարել:

Տիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթների կատարումը վերապահվում է Եվրասիական զարգացման բանկին հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագրի հիման վրա, որը կնքվում է հիմնադիր պետությունների եւ բանկի միջեւ:

4. Պայմանագրի հավելվածն է հանդիսանում հիմնադրամի Կանոնադրությունը, որը բաղկացած է 4 բաժնից, 23 հոդվածից:

Կանոնադրության 1-ին բաժնով սահմանվում է հիմնադրամի կարգավիճակը՝ այն իրավաբանական անձ կամ կազմակերպություն չի հանդիսանում:

Տիմնադրամի մասնակիցները պարասխանաբարվություն են կրում հիմնադրամի գործառույթությունների շրջանակներում իրենց ստանձնած պարավորությունների համար՝ հիմնադրամի միջոցներում իրենց ունեցած մասնաբաժնի սահմաններում:

Կանոնադրության 2-րդ բաժինը կանոնակարգում է հիմնադրամի միջոցների ձեւավորման եւ օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Տամաձայն Կանոնադրության 6-րդ հոդվածի՝ հիմնադրամի միջոցների գոյացման աղբյուրներն են՝

ա. հիմնադրամին կապարվող վճարումները,

բ. հիմնադրամի ժամանակավորապես ազատ միջոցների փոխադրված մուտքերը,

գ. վերադարձման հիմքով հիմնադրամի միջոցների փոխադրումից սրացված մուտքերը,

դ. հիմնադրամին կապարվող նվիրաբերությունները,

ե. հիմնադրամին ուղղված այլ մուտքերը:

Կանոնադրության 3-րդ բաժինը նախատեսում է հիմնադրամի միջոցների կառավարման ընդհանուր սկզբունքները, հիմնադրամի խորհրդի, խորհրդի նախագահի եւ հիմնադրամի միջոցների կառավարչի կարգավիճակը եւ լիազորությունների շրջանակը:

Կանոնադրության 4-րդ բաժինը նվիրված է հիմնադրամի կազմից մասնակիցների դուրս գալու, գործառնությունների ժամանակավոր կասեցման, դադարեցման եւ վեճերի լուծման կարգին ու պայմաններին:

Նարկ է արձանագրել, որ պայմանագրով Նայասարանի Նանրապետության սրանձնած պարավորությունները համահունչ են ՆՏ Սահմանադրության 9 հոդվածի դրույթներին, քանզի կոչված են զարգացնելու կողմերի միջեւ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ, ինչպես նաեւ ստեղծել բարենպաստ պայմաններ հակաճգնաժամային ծրագրեր իրականացնելու, ֆինանսական կայունություն հաստատելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2009 թվականի հունիսի 9-ին Մոսկվայում ստորագրված՝ Եվրասիական փոփոխական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագրում ամրագրված պարավորությունները համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 սեպտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ-830